



Ավետիք Իսահակյան

Նիկոլ Աղբալյան, 1898թ .

... Բոլոր հոգով պիտի կենտրոնանամ այն մեծ նյութի, գործի վրա, որ անունը «Յոթ օր ապատում, յոթ գիշեր անապատում» են դրել, որտեղ պիտի մտցնեն բոլոր իմ հիմարություններն ու ոչ-հիմարությունները... Շա՛տ-շատերի մոտ են կարդացել այդ գրվածքի կոնսպեկտն ու մշակված կտորները, և բոլորն էլ գովել են... Մենակ այդ պիտի գրեն և վերջ տամ գրելուս և գոհ կլինեն, որ մեռնիմ...

(Հեղափոխական Էպոսիս թեման շա՛տ հետաքրքիր է):

Այժմ խնդրում են, որ պ. Արասխանյանցին դիմեք, որ ինձ տեղ տա «Մուրճ»-ում և այս տետրիցս տպագրեցեք «Մուրճ»-ում, հենց մոտ համարներից <մեկում>:

Շատ են ուզում «Մուրճ»-ում գրել, իբրև լուրջ օրգանում, ուստի խընդրում են, որ ինձ էլ* տեղ տաք:

Իմ ոտանավորները խստությամբ քննելիս բացատրեք մի քանի տողով լիրիզմի նշանակությունը, ապա անցեք ոտանավորներին: Քննադատելիս աչքի անցրեք և՛ տետրում գրածներս... Մի փոքր երկար կանգ սաեք ժողովրդական մտիվների վրա: Դիտեցեք և՛ այն, որ իմ հանգերը այսպես կոչված «ճոխ» տեսակիցն են - օրինակ լիքն են այսպիսի 1 անընթ.- «մրմունջ-սրտունջ, շողա-ցողա, դողա-լողա»... Հենց ժողովրդական տարրը...

Եթե կարող եք՝ ջախջախեք իմ մեջ այս ինքնահավան - կարծիքը. <...>